ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
CONSTRUCTION
СТРОИТЕЛЬСТВО

Հիմնական միջոցների գործարկման ցուցանիշի մեջ ներառվում է շինարարությունն ավարտված և շահագործման հանձնված կազմակերպությունների, արտադրական և ոչ արտադրական նշանակության շինությունների ու կառույցների արժեքները, նոր շահագործվող մեքենաների, բոլոր տիպի տրանսպորտային միջոցների (մոնտաժման կարիք ունեցող և չունեցող, շինարարության նախահաշվի մեջ մտնող և չմտնող) արժեքները, գործիքների, գույքի և այլ առարկաների արժեքները, որոնք հաշվառված են հիմնական միջոցների մեջ, բազմամյա տնկիների (մրգատու, խաղողի այգիներ և այլն) արժեքը, հողերի ոռոգման և չորացման աշխատանքների արժեքը, հողերի բարելավման հետ կապված կապիտալ ծախսերը և հիմնական միջոցների արժեքի մեծացման հետ կապված այլ ծախսերը:

Շինարարության ծավալում ընդգրկվում են գործող արդյունաբերական, գյուղատնտեսական, տրանսպորտային, առևտրական և այլ կազմակերպությունների նոր շինարարության, վերակառուցման, ընդլայնման և տեխնիկական վերազինման ծախսերը, բնակարանային և մշակութակենցաղային շինարարության ծախսերը:

Շինարարության ծավալում ընդգրկվում են բոլոր տեսակի շինարարական աշխատանքների ծախսերը, շինարարության նախահաշվով նախատեսված սարքավորումների մոնտաժի, մոնտաժման կարիք ունեցող կամ չունեցող սարքավորումների, շինարարության նախահաշվի մեջ մտցվող արտադրության գործիքների և տնտեսական գույքի, շինարարության նախահաշվի մեջ չմտնող մեքենաների և սարքավորումների ձեռքբերման ծախսերը, այլ կապիտալ աշխատանքների ծախսերը:

The indicator of capital assets exploitation includes the value of organizations, buildings and constructions of production and non-production importance with completed construction and put into operation, as well as value of newly exploited machines, all types of transport means (installed and not installed, included and excluded from the construction estimates), cost of tools, invertary, etc. which are registered in the capital assets, value of perennial plantations (fruit and grapes gardens etc.), value of works on land irrigation and drainage, capital expenditures related to the land quality improvement and other expenses connected with the increase of the capital assets value.

In the volume of construction includes: the costs of active industrial, agricultural, transport, commercial and other organizations on new construction, reconstruction, expansion and equipment. Expenses on construction of dwellings and buildings of cultural and everyday services are also included.

Construction includes expenses on all types of construction works: expenses on installation of equipment foreseen in the construction estimate, expenses on purchase of equipment requiring or not requiring an installation, purchase of production tools and inventary included in the construction estimate, purchase of machines and equipment not included in the construction estimate, other capital works.

В показатель ввода в действие основных средств включается стоимость законченных строительством и вводимых в действие организаций, зданий и сооружений производственного и непроизводственного назначения, стоимость вводимых в действие новых машин, транспортных средств всех видов (требующих и не требующих монтажа, входящих и не входящих в сметы на строительство); стоимость инструмента, инвентаря и других предметов, зачисляемых в основные средства, стоимость многолетних насаждений (садов, виноградников и т.д.); стоимость работ по орошению и осушению земель; капитальные затраты по улучшению земель и другие затраты, связанные с увеличением стоимости основных средств.

В объем строительства включаются затраты на новое строительство, реконструкцию, расширение и техническое перевооружение действующих промышленных, сельскохозяйственных, транспортных, торговых и других организаций, затраты на жилищное и культурно-бытовое строительство.

К строительству относятся затраты на строительные работы всех видов; затраты по монтажу оборудования, на приобретение оборудования, требующего или не требующего монтажа, предусмотренного в сметах на строительство, на приобретение производственного инструмента и хозяйственного инвентаря, включаемых в сметы на строительство, на приобретение машин и оборудования, не включаемых в сметы на строительство, затраты на другие капитальные работы.

Բնակելի շենքերի ընդհանուր (օգտակար) մակերեսը բաղկացած է բնակելի մակերեսից և օժանդակ տարածությունների մակերեսից: Բնակարանային և հյուրանոցային տիպի բնակելի տների, ինչպես նաև բնակարաններ պարունակող ոչ բնակելի շենքերի բնակելի մակերեսի մեջ ընդգրկվում է բնակարանի ներսում գտնվող բնակելի սենյակների՝ ճաշասենյակների, ննջասենյակների, մանկական սենյակների և այլ բնակելի սենյակների մակերեսը:

Հանրակացարանների բնակելի մակերեսի մեջ հաշվի է առնվում միայն ննջասենյակների և ցերեկային ժամանցի սենյակների մակերեսը:

Օժանդակ տարածությունների թվին են պատկանում բնակարանի ներսում գտնվող խոհանոցը, միջանցքները, սանհանգույցները, լողասենյակները, հանդերձարանները, պահեստները, պահարանները: Հանրակացարաններում, բացի վերը նշվածներից, օժանդակ տարածությունների թվին են պատկանում նաև մշակութակենցաղային նշանակության և բժշկական ծառայության տարածությունները:

Օժանդակ տարածությունների մեջ են մտնում փակ պատշգամբները, լոջաները, երկարավուն պատշգամբները, եթե դրանք նախատեսված են նախագծերի տեխնիկատնտեսական ցուցանիշներով:

Գործարկված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի մեջ չեն մտնում նախասրահների, նախամուտքերի, աստիճանավանդակների, ընդհանուր միջանցքների մակերեսները, ինչպես նաև բնակելի տներին կից կառուցված ոչ բնակելի տարածքների մակերեսները:

The total floor space of dwelling- houses consists of actual living spaces and subsidiary spaces. The floor space at the dwelling-houses and hotels as well as non residential premises including housing rooms of residential flats: dinning-rooms, bedrooms, child-rooms and another ones. The dwelling dormitory spaces mean sleeping-rooms and day-time-rooms only.

Subsidiary spaces are considered spases in the flats: kitchen, corridors, toilets, bathrooms, cloak rooms, storage, built-in-closets in the dwelling. In the hostels, besides the abovementioned spaces, the spaces of cultural and everyday and medical services are also considered subsidiary spaces. The verandas, lodges, long-form balconies are considered subsidiary spaces, if they are foreseen according to the technical and economic indicators of the project.

The floor spaces of halls, tambours, staircases, common corridors, as well as the floor spaces of non-residential premises close to dwellings are not included in the total actual living space.

Общая (полезная) площадь жилых домов состоит из жилой площади и площади подсобных помещений. В жилую площадь жилых домов квартирного и гостиничного типа, а также нежилых зданий, в которых имеются жилые квартиры, включается площадь жилых комнат: столовых, спальных, детских и других жилых комнат внутри квартиры.

В жилой площади общежитий учитывается только площадь спальных комнат и комнат дневного пребывания.

К подсобным помещениям относятся помещения, расположенные внутри квартир: кухни, коридоры, санитарные узлы, банные и гардеробные комнаты, кладовые, встроенные шкафы. Кроме вышеупомянутых, в общежитиях к подсобным помещениям относятся также помещения культурно-бытового назначения и медицинского обслуживания.

Крытые приквартирные веранды, лоджии, террасы включаются в число подсобных помещений, если они предусмотрены технико-экономическими показателями проектов.

Не включаются во ввод в действие общей площади жилых зданий: площадь вестибюлей, тамбуров, лестничных площадок общих коридоров, а также площади нежилых помещений, пристроенных к жилым домам.

´Ü²Î°ÈÆ îÜºðÆ ¶àðÌ²ðÎàôØ À (Ñ³½³ñ ù³é³ÏáõëÇ Ù»ïñ ÁÝ¹Ñ³Ýáõñ Ù³Ï»ñ»ë)
DWELLINGS PUT IN OPERATION (thousand square metres of total space)
ВВОД В ДЕЙСТВИЕ ЖИЛЫХ ДОМОВ (

ïáÏáëÝ»ñáí` 2007 Ã. ÝÏ³ïÙ³Ùµ -in percents to 2007- i j h p _ g l Z o d7]



´Ü²Î°ÈÆ îÜºðÆ ¶àðÌ²ðÎàôØÜ ÀêÎ üÆÜ²Üê²ìàðØ²Ü Ð²ïì²ÌÜº ՐԻ
DWELLINGS PUT IN OPERATION BY SECTORS OF FINANCING
ВВОД В ДЕЙСТВИЕ ЖИЛЫХ ДОМОВ

Ñ³½³ñ ù³é³ÏáõëÇ Ù»ïñ ÁÝ¹Ñ³Ýáõñ Ù³Ï»ñ»ë - thousand square metres of total space
lukyq Z d \ Z ^ j Z l g u o f _ l j h \ h [s _ c i e h s Z ^ b